Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1384-Ն որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 49-րդ կետով.

«

49.	1) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունների (մանկատներ), երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների, երեխաների աջակցության կենտրոնների, երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների սպասուհիներ. 2) տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց համար բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունների (ընդհանուր տիպի տուն-ինտերնատներ) սանիտարներ	4	4

»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա երկարացված արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը սահմանելու մասին» N 1599-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի «Առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» N 201-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածի՝

ա. N 1 ցանկի II բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

II. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններ (մանկատներ), երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություններ, երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատություններ, երեխաների աջակցության կենտրոններ, երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններ, երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններ, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց համար ընդհանուր տիպի հաստատություններ, 18 տարին լրացած՝ քրոնիկ հոգեկան հիվանդությամբ կամ խոր մտավոր հետամնացությամբ հաշմանդամություն ունեցող կամ ծերունական փսիխոզով կամ ծանր արտահայտված սկլերոզով անձանց բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատություններ, խնամքի կարիք ունեցող տարեց, չաշխատող (բացառությամբ տնային պայմաններում աշխատող) անձանց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամք տրամադրող կազմակերպություններ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց խնամք տրամադրող սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններ, անօթևան և բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպություններ	
Բժիշկներ, միջին բժշկական անձնակազմ (բուժքույր), մինչև վեց տարեկան երեխաների խնամքի աշխատողներ (դայակ), կրտսեր բժշկական անձնակազմ, այդ թվում՝ սանիտար (ըստ մասնագիտացումների), ախտահանող և հսկիչ՝ բաժանմունքի	բժշկական օգնության և սպասարկման տրամադրման աշխատանքներ

»,

բ. N 1 ցանկի XI բաժնի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն»,

գ. N 1 ցանկի XI բաժնի 1-ին սյունակի առաջին պարբերությունը «քիմիկոսներ» բառից հետո լրացնել «, թունաբաններ» բառով,

դ. N 1 ցանկի XI բաժնի 1-ին սյունակի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Քաղաքացիական ծառայողներ և քաղաքացիական աշխատանք կատարողներ, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպության բժիշկ-հիգիենիստներ, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներ, ճարտարագետներ և միջին բժշկական անձնակազմ:»,

ե. N 2 ցանկի V բաժնի վերնագրում «պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն, հիվանդների վերահսկման և կանխարգելման կազմակերպություններ և նրանց կառուցվածքային ստորաբաժանումներ» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն» բառերով,

զ. N 2 ցանկի VI բաժնի վերնագրում «Պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության տեսչություն և դրա ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններ, հիվանդների վերահսկման և հիվանդությունների կանխարգելման կենտրոն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն» բառերով,

է. N 2 ցանկի VII բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

VII. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներ	
Բժիշկներ, այդ թվում՝ ղեկավար, մանրէաբանական, մակաբուծաբանական, վիրուսաբանական, քիմիական և ճառագայթաբանական, թունաբանական լաբորատորիայի (բաժանմունք) մանրէաբան, մակաբուծաբան, վիրուսաբան, քիմիկ, թունաբան, միջին բժշկական և կրտսեր անձնակազմ	մանրէաբանական, մակաբուծաբանական, վիրուսաբանական, քիմիական և ճառագայթաբանական, թունաբանական լաբորատորիաներում կատարվող աշխատանք, վարակիչ հիվանդների հետ անմիջականորեն կապված աշխատանք
Բժիշկ-համաճարակաբան, բժիշկ-համաճարակաբանի օգնական, բժիշկ-ախտահանաբան, հրահանգիչ-ախտահանող, այդ թվում՝	օջախային, խցային և կանխարգելիչ (պրոֆիլակտիկ) ախտահանության, միջատասպան (դեզինսեկցիա), կրծողների

ստորաբաժանման ղեկավար, բժշկական ախտահանող, խցային (կամերային) ախտահանության աշխատողներ (այդ թվում՝ ստորաբաժանման ղեկավար)	ոչնչացման (դեռատիզացիա) գծով աշխատանք
Քաղաքացիական ծառայողներ և քաղաքացիական աշխատանք կատարողներ, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության բժիշկ-համաճարակաբան, բժիշկ-վիրուսաբան, բժիշկ-մանրէաբան, բժիշկ-մակաբուծաբան, այդ թվում՝ ստորաբաժանման ղեկավար, միջին բժշկական անձնակազմ	վարակիչ հիվանդությունների օջախներում աշխատանքներ
Բժիշկ-համաճարակաբան, միջին և կրտսեր բժշկական անձնակազմ, հավաքարար	սանիտարակարանտինային կետի դիտարանում և մեկուսարանում աշխատանք, դեռատիզացիոն խայծերի պատրաստման գծով աշխատանք
Միջին և կրտսեր բժշկական անձնակազմ, հավաքարար	վարակված հիվանդների տեղահանման գծով աշխատանք
Հրահանգիչ-ախտահանող, բժշկական ախտահանող	ախտահանման միջոցների չափափաթեթավորման և պահպանման հետ կապված աշխատանք
Բժիշկ-համաճարակաբան, բժիշկ-համաճարակաբանի օգնական, բժիշկ, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ու դրանց կառուցվածքային ստորաբաժանումների մանրէաբանական լաբորատորիայի միջին և կրտսեր բժշկական անձնակազմ, հավաքարար	պալարախտի միկրոմանրէներով վարակված նյութի հետ անմիջականորեն կապված աշխատանք
Միջատաբաններ, այդ թվում՝ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար, միջատաբանների օգնականներ, բոնիֆիկատոր	միջատաբանական աշխատանքների կատարում

»,

ը. N 3 ցանկի VI բաժնի 1-ին սյունակի առաջին և երկրորդ պարբերություններից հանել «հավաքարար» բառը, երկրորդ պարբերությունը «բժիշկներ» բառից հետո լրացնել «և

բարձրագույն ոչ բժշկական կրթությամբ մասնագետներ», իսկ «անձնակազմ» բառից հետո՝ «, միջին ոչ բժշկական կրթությամբ մասնագետներ» բառերով,

թ. N 3 ցանկի VI բաժնի վերնագրում «Հակաժանտախտային կազմակերպություններ, պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն, դրա ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններ, հիվանդների վերահսկման և հիվանդությունների կանխագելման կենտրոն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն» բառերով.

2) որոշման N 2 հավելվածի՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունների (մանկատներ), երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների, երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատությունների, երեխաների աջակցության կենտրոնների, երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների, երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց համար ընդհանուր տիպի հաստատությունների, 18 տարին լրացած՝ քրոնիկ հոգեկան հիվանդությամբ կամ խոր մտավոր հետամնացությամբ հաշմանդամություն ունեցող կամ ծերունական փսիխոզով կամ ծանր արտահայտված սկլերոզով անձանց բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատությունների, խնամքի կարիք ունեցող տարեց, չաշխատող (բացա-

ռությամբ տնային պայմաններում աշխատող) անձանց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամք տրամադրող կազմակերպությունների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող՝ 18 տարին լրացած անձանց խնամք տրամադրող սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների (այսուհետ՝ կազմակերպություններ) նախատեսված աշխատողների աշխատաժամանակի և հանգստի ռեժիմը որոշվում է՝ հաշվի առնելով ոլորտի աշխատանքային առանձնահատկությունները:»,

բ. 2-րդ կետը «սաների» բառից հետո լրացնել «կամ խնամվողների» բառերով,

գ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Կազմակերպություններում աշխատողների համար, կախված նրանց զբաղեցրած պաշտոնից և (կամ) մասնագիտությունից, աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել՝

1) շաբաթական 22 ժամից՝ դասավանդող հատուկ մանկավարժների (լոգոպեդ, տիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ, օլիգոֆրենոմանկավարժ) մանկավարժական աշխատանքի համար.

2) շաբաթական 24 ժամից՝ երաժիշտների համար.

3) շաբաթական 30 ժամից՝ մարմնակրթության հրահանգչի, բուժական ֆիզկուլտուրայի հրահանգչի (կինեզոլոգ) համար.

4) շաբաթական 30 ժամից՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունների (մանկատներ), երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների, հանրակրթական հաստատությունների երկարօրյա խմբերի դաստիարակների համար.

5) շաբաթական 36 ժամից՝ մինչև վեց տարեկան երեխաների խնամքի ծառայություններ մատուցող աշխատողների (դայակ) համար.

6) շաբաթական 36 ժամից՝ էրգոթերապիստի, խմբակի դաստիարակի, հոգեբանի, սոցիալական աշխատողի, սոցիալական մանկավարժի, մեթոդիստ-համակարգողի, հատուկ մանկավարժի համար.

7) շաբաթական 39 ժամից՝ վեց տարեկանից բարձր անձանց խնամքի ծառայություններ մատուցող աշխատողների (սպասուհի) համար։»։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։